ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N: 2

ՀՀՏԿԵՆ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-24/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Արտաշատի ջրանցքի 9-րդ դիտակետի ծառայողական շենքի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան

15 հուլիսի 2024 թ.

ժամը. 17:30

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Արսենյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/ Գնահատման Աշխատակազմ)

Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Ս. Ստեփանյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/ Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Կ. Բարսեղյան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման և գնահատման մասին

(Ա. Արսենյան)

ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-24/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Արտաշատի ջրանցքի 9-րդ դիտակետի ծառայողական շենքի նորոգման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում, 2024 թ. հուլիսի 15-ին, ժամը 17:30-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված աշխատանքների ձեռքբերման գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Ձեռքբերման գինը (ՀՀ դրամ)
1	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ	6901900 (վեց միլիոն ինը հարյուր մեկ հազար ինը հարյուր)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումները

ՀՀՏԿԵՆ-Ջ-ԳՀԱՇՁԲ-24/15 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	«ԷԼԵԿՏՐՈՆԻԿ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
2	«ՍՏԱՐՏ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ և «Ցենտռա Կոլ» ՍՊԸ կոնսորցիում
3	«Էլիտստրոյ» ՓԲԸ
4	ԱՁ «Գևորգ Գևորգյան»
5	«Հիդրովերանորոգում» ՍՊԸ
6	«Հեր-Մուշ շին» ՍՊԸ
7	«ՀԱԶԱՐԱՇԵՆ» ԱԿ
8	«Վանդաժի» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

«Հեր-Մուշ շին» ՍՊԸ կողմից ներկայացված հայտում բացակայում է իր կողմից հաստատված հավաստումը՝ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին (հավելված 1.1) :

Գնահատող հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և մասնակցին ծանուցել՝ մեկ աշխատանքային օրում ներկայացնել պահանջվող փաստաթուղթը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4 դեմ-0

2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Մ. Առաքելյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել մասնակցների կողմից պահանջվող փաստաթղթերը ստանալու հաջորդ օրվա ժամը 10:00-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, 6-րդ հարկ հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ- 4, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ա. Արսենյան

Անդամներ՝ _____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

_____ Ա. Ստեփանյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Կ. Բարսեղյան